ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. հունիսի 2-ից 6-ը ք. Թբիլիսի (Վրաստան)

գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Միեր Ոիվիխանյան - ՀՀ ՊԵԿ ԱՏԳ մաքսային սպասարկման և հսկողության վարչության դասակարգման և մաքսասակագնային հարցերով մասնագիտական կենտրոն-բաժնի գլխավոր մաքսային տեսուչ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Վրաստան, ք. Թբիլիսի հունիսի 2-ից 6-ը:

3. Հրավիրող կողմը՝

Վրաստանի եկամուտների ծառայություն:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր Վրաստանի եկամուտների ծառայության ներկայացուցիչների հետ աշխատանքային կարգով ձեռք բերված պայմանավորվածության շնորհիվ՝ «Ծագման երկրի սերտիֆիկատների տրամադրում մաքսային մարմնի կողմից» նախագծի շրջանակներում ապրանքների ծագման հավաստագրման գործընթացի՝ վրացական փորձի ուսումնասիրման նպատակով ճանաչողական այցի իրականացումը:

5. Քննարկված թեմաները՝

Ս/թ հունիսի 3-ից 5-ը կատարված այցի շրջանակներում ուսումնասիրվել է Վրաստանի եկամուների ծառայության կողմից ապրանքների ծագման հավաստագրերի տրամադրման գործընթացը, որը ներառում է՝

- հավաստագրեր ստանալու նպատակով հայտատուների կողմից մուտքագրվող թղթային և/կամ էլեկտրոնային տարբերակներով դիմումների ձևաչափի կիրառումը,

- դիմում-հայտերը համապատասխան մասնագետներին մակագրելը, նրանց կողմից դիմումների և կից փաստաթղթերի ուսումնասիրության իրականացումը,

- դիմումների բավարարման կամ մերժման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետները, ինչպես նաև այդ ժամկետների սառեցումը՝ մինչ անհրաժեշտ կամ լրացուցիչ փաստաթղթերը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում նշանակված փորձաքննության եզրակացությունները մաքսային մարմիններին ներկայացնելը,

- հայտն ուսումնասիրող մասնագետների կողմից հավաստագրերի մուտքագրումն ու դրանց գրանցումը համապատասխան ռեեստրում,

- դիմումատուին ստացման մաքսային մարմնում հավաստագրերի բնօրինակների տպագրումը, կնքումն ու հանձնումը և այլն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ուսումնասիրվել է նաև տեղեկատվությունը

- հավաստագրերի ձևաթղթերի խմբաքանակների տպագրությանն ու հաշվառման գործընթացի, հանձնված հավաստագրերի մաքսային ծառայության օրինակների պահպանության ու արխիվացման վերաբերյալ,
- գործող տեղեկատվական բազաների միջոցով իրականցվող ռեեստրների մասին,
- մասնագիտական կադրերի ուսուցման և իրազեկման մասին,
- ծագման հավաստագրերի տրամադրման գործընթացում համապատասխան լիազորություններ ունեցող կադրերի ըստ նեղ մասնագիտական հմտությունների ներգրավման վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Վրաստանի եկամուտների ծառայության մասնագետների ցուցաբերած պատրաստակամությունն ու խորհրդատվությունը արժանի են բարձր գնահատականի:

Այցի շնորհիվ ավելի ճանաչելի դարձավ վերը նշված գործընթացի ընկալումը, որն օգտակար կլինի հետագայում ՊԵԿ կողմից «ծագման հավաստագրերի տրամադրում մաքսային մարմինների կողմից» նախագծի ներդրման գործընթացում: Նախագիծը կյանքի կոչելու համար պահանջվում են մեծ ծավալի աշխատանքներ՝ ավելի մանրակրկիտ ուսումնասիրություններ, օրենսդրական դաշտի փոփոխություններ, ծրագրային ապահովում, համապատասխան կադրերի ներգրավում և ուսուցում, հետևաբար ցանկալի կլինի, որ վրացական կողմի մասնագետների հետ հանդիպումները կրեն շարունակական բնույթ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Միեր ՈՒկիխանյան

11.06.2024թ.